ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2019թ. մարտի 11-ից 15-ը Քենիայի Հանրապետություն (Նայրոբի)՝ բնապահպանության նախարար Էրիկ Գրիգորյանի գործուղման վերաբերյալ

1. **<u>ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ</u>**
   Էրիկ Գրիգորյան

2. **<u>ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ</u>**
   Բնապահպանության նախարար

3. **<u>ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ և ԺԱՄԿԵՏԸ</u>**
   Քենիայի Հանրապետություն (Նայրոբի)

   2019թ. մարտի 11-ից 15-ը

4. **<u>ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ</u>**
   ՄԱԿ-ի Շրջակա միջավայրի ծրագիր

5. **<u>ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ</u>**
   Մասնակցություն՝ Միացյալ ազգերի շրջակա միջավայրի գագաթաժողովի 4-րդ նստաշրջանին:

6. **<u>ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ, ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ</u>**

   Նայրոբիում կայացած Միացյալ ազգերի շրջակա միջավայրի գագաթաժողովի 4-րդ նստաշրջանին մասնակցում էին բազմաթիվ երկրների բնապահպանության ոլորտի նախարարներ, միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ, քաղաքացիական հասարակության և անհատական սեկտորի ղեկավարներ, որոնք հանդես եկան իրենց ելույթներով: Հանդիպման ժամանակ ես ևս հանդես եմ եկել զեկույցով (զեկույցը կցվում է):
   Բարձրաստիճան հանդիպման թեման «Շրջակա միջավայրի պահպանությանը, կայուն սպառմանը և արտադրությանն ուղղված նորարարական լուծումներն» էին, որոնք ներկայացվեցին կառավարությունների, միջազգային կազմակերպությունների, քաղաքացիական հասարակության և անհատական սեկտորի ղեկավարների կողմից: Սահմանվեցին առկա բնապահպանական

հիմնախնդիրներ, դրանց լուծման նորարարական տարբերակները և լուծման համար կիրառվող կամ մշակման փուլում գտնվող օրենսդրական կարգավորումները:

7. ԵՐԿԿՈՂՄ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ

Միացյալ ազգերի շրջակա միջավայրի գագաթաժողովի 4-րդ նստաշրջանի ընթացքում, ի թիվս օրակարգով նախատեսված քննարկումների, տեղի են ունեցել նաև մի շարք առանձին երկկողմ հանդիպումներ, որոնցից առավել ուշագրավ է՝

Ռուսաստանի Դաշնության բնական ռեսուսրների և շրջակա միջավայր նախարար Դմիտրի Կոբիլկինի, Հունաստանի շրջակա միջավայրի և էներգետիկայի նախարար Սոկրատես Ֆամելոսի, Սինգապուրի ջրային ռեսուրսների կառավարման և շրջակա միջավայրի պահպանության նախարար Մասագոս Զուլկիֆիլիյի, Քենիայի Հանրապետության շրջակա միջավայրի նախարար Կերիակո Տոբիկոյի, Միացյալ ազգերի շրջակա միջավայրի գագաթաժողովի 4-րդ նստաշրջանի նախագահ Սիիմ Կիսլերի, Համաշխարհային բանկի ժամանակավոր նախագահ Կրիստալինա Գեորգևնայի հետ և քննարկում եմ ունեցել ընդհանուր բնապահպանական առկա հիմնահարցերի, պլաստիկի հետ կապված օրենսդրական կարգավորումների, կլիմայի փոփոխության, Հայաստանի կողմից ի նպաստ շրջակա միջավայրի խնդիրների լուծման վերաբերյալ:

Բոլոր առանձնազրույցներում իմ կողմից վերահաստատվել է երկրի դիրքորոշումը՝ բնապահպանական հիմնախնդիրները ճանաչելու որպես հրատապ օրակարգային հարց:

8. ՁԵՌՔԲԵՐՎԱԾ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գագաթաժողովի ընթացքում ընդուվեց Նախարարական Հռչակագիրը, 2020-2021թթ. Աշխատանքային ծրագիրը և բյուջեն, անդամ երկրների կողմից ներկայացված մի շարք բանաձևեր, որոնք ուղղված էին ՄԱԿ-ի Կայուն Զարգացման Նպատակների իրականացմանը, Աղտոտվածության վերաբերյալ գլոբալ ծրագիրը:

Բնապահպանության նախարար՝

Էրիկ Գրիգորյան

X _____